**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՔԻ ՀԵՐ ՀԵՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԶԻՎԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՏԱՆ՝ ՈՒԺԵՂ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎԵՐՎԱԾ ՏԱՆԻՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ /ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ/ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԶՀ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26**

«05» նոյեմբերի 2021թ.

ք. Ջերմուկ

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Վահագն Արսենյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Գրիգոր Հովհաննիսյանը՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը` պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**3.1 Պայմանագրի գինը կազմում է 1199000 (մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրի պայմանները կիրառվում են նաև մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

8.3 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.4 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.5 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.6 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագրի կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով պարանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900342131027
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավարի պաշտոնակատար
՝ Վ. Արսենյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Գրիգոր Հովհաննիսյան
ք. Եղեգնաձոր Նարեկացի փ. 22
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475801009610010
ՀՎՀՀ 76816837
տնօրեն՝ Գ. Հովհաննիսյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«05» նոյեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 44118300 | Թիթեղ (0.4 մմ) | մ$^2$ | 4000 | 572000 | 143 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44112230 | տանիքի հենասյուներ (բալկա) | հատ | 9200 | 276000 | 30 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44119000 | Տախտակ, փայտյա | մ$^3$ | 200 | 145800 | 729 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44112230 | տանիքի հենասյուներ (կանգնակ) | հատ | 9200 | 36800 | 4 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44192610 | մեխ շինարարական | կգ | 900 | 9000 | 10 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 31221241 | պտուտակ | հատ | 25 | 15000 | 600 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44161250 | ջրերի հեռացման խողովակներ (ժոլոբ) | մետր | 2200 | 52800 | 24 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 39132220 | Կախիչներ | հատ | 1700 | 40800 | 24 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44163111 | ջրահեռացման խողովակներ (խողովակ ժոլոբի) | մետր | 2800 | 16800 | 6 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44211610 | Անկյուն (ժոլոբի անկյուն) | հատ | 5000 | 20000 | 4 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |
| 44118300 | Թիթեղ | մ$^2$ | 3500 | 14000 | 4 | Ջերմուկ համայնք, գ.Հերհեր | 05.11.2021-15.11.2021թթ. |

**ԳՆՈՐԴ**
Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900342131027
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Վ. Արսենյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ Գրիգոր Հովհաննիսյան
ք. Եղեգնաձոր Նարեկացի փ. 22
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475801009610010
ՀՎՀՀ 76816837
տնօրեն՝ Գ.Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«05» նոյեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների. | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-11 | Շին.նյութեր | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | 1199000 |

**ԳՆՈՐԴ**
Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900342131027
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավարի պաշտոնակատար
Վ. Արսենյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ Գրիգոր Հովհաննիսյան
ք. Եղեգնաձոր Նարեկացի փ. 22
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475801009610010
ՀՎՀՀ 76816837
տնօրեն՝ Գ. Հովհաննիսյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«05» նոյեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Գրիգոր Հովհաննիսյան

Պատվիրատու
Ջերմուկի համայնքապետարան

ք. Եղեգնաձոր Նարեկացի փ. 22
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2475801009610010
ՀՎՀՀ 76816837

ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900342131027
ՀՎՀՀ 08913735

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«15» «նոյեմբերի» 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՔԻ ՀԵՐ ՀԵՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԶԻՎԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՏԱՆ՝ ՈՒԺԵՂ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎԵՐՎԱԾ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ /ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ/ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «05» նոյեմբերի 2021թ.
Պայմանագրի համարը՝ N ՋՀ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «նոյեմբերի» 2021թ. դուրս գրված N 7343501291 հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Թիթեղ (0.4 մմ) | Թիթեղ (0.4 մմ) | 143 | 143 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 572000 | Համաձայն պայմանագրի |
| 2 | տանիքի հենասյուներ (բալկա) | տանիքի հենասյուներ (բալկա) | 30 | 30 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 276000 | Համաձայն պայմանագրի |
| 3 | Տախտակ, փայտյա | Տախտակ, փայտյա | 729 | 729 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 145800 | Համաձայն պայմանագրի |
| 4 | տանիքի հենասյուներ (կանգնակ) | տանիքի հենասյուներ (կանգնակ) | 4 | 4 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 36800 | Համաձայն պայմանագրի |
| 5 | մեխ շինարարական | մեխ շինարարական | 10 | 10 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 9000 | Համաձայն պայմանագրի |
| 6 | պտուտակ | պտուտակ | 600 | 600 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 15000 | Համաձայն պայմանագրի |
| 7 | ջրերի հեռացման խողովակներ (ժոլոբ) | ջրերի հեռացման խողովակներ (ժոլոբ) | 24 | 24 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 52800 | Համաձայն պայմանագրի |
| 8 | Կախիչներ | Կախիչներ | 24 | 24 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 40800 | Համաձայն պայմանագրի |
| 9 | ջրահեռացման խողովակներ (խողովակ ժոլոբի) | ջրահեռացման խողովակներ (խողովակ ժոլոբի) | 6 | 6 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 16800 | Համաձայն պայմանագրի |
| 10 | Անկյուն (ժոլոբի անկյուն) | Անկյուն (ժոլոբի անկյուն) | 4 | 4 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 20000 | Համաձայն պայմանագրի |
| 11 | Թիթեղ | Թիթեղ | 4 | 4 | 05.11.2021-.15.11.2021թթ. | 14000 | Համաձայն |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | և պայմանագրի |

**Ընդամենը՝** 1199000

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է

Ապրանքը հանձնեց

Ստորագրություն

Գ.Յովհաննիսյան

Ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

Ստորագրություն

Ա.Գառնիկյան

Ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«05» նոյեմբերի 2021թ. կնքված*
N ՁՅ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N 01

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Գրիգոր Յովհաննիսյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021թ. նոյեմբերի 05-ին կնքված N ՋՅ-ՄԱԱՊՁԲ-05/11/21/26 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2021թ. նոյեմբերի 15-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Թիթեղ (0.4 մմ) | մ² | 143 |
| տանիքի հենասյուներ (բալկա) | հատ | 30 |
| Տախտակ, փայտյա | մ³ | 729 |
| տանիքի հենասյուներ (կանգնակ) | հատ | 4 |
| մեխ շինարարական | կգ | 10 |
| պտուտակ | հատ | 600 |
| ջրերի հեռացման խողովակներ (ծորք) | մետր | 24 |
| Կախիչներ | հատ | 24 |
| Ջրահեռացման խողովակներ (խողովակ ծորքի) | մետր | 6 |
| Անկյուն (ծորքի անկյուն) | հատ | 4 |
| Թիթեղ | մ² | 4 |

**Հանձնեց**

Գ. Յովհաննիսյան

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

Ա. Գառնիկյան

ազգանուն, անուն

ստորագրություն